

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
«Իրավունի» համար՝ Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ՝ 6 ֆր.
(հասցանակների համար՝ (երկու փոխակի
համար՝) Տարեկան 14, վեցամսեայ՝ 7 ֆր.
Քանիպայի » 2.60 տղ. վեցամս 1.50
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
«ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ. Ս. Ն. Ա. (Պուլկարիա)
Редация на вѣстникъ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)

Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեամբ ուղղեալ գրութիւն
եւ չին դրկուիլ եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյրովի կամ մասամբ:
Ծանուցան յոյր 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՍԵՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

Շատ անգամ մեր խմբագրու-
կաններու նիւթ կըլլայ հայ վար-
ժարանաց անգոհացողիչ վիճակը,
և ստէպ անոնց ամուլթեան իբր
պատասխանատու կը դատափետ-
ուին ուսուցիչները:

Անշուշտ հայ մամուլն անբռնա-
բարելի իրաւունքն է հետամտիլ
թէ՛ ազգային և թէ՛ մասնաւոր
վարժարանաց ընթացքին և ամե-
նայն անկողմնակալութեամբ քնն-
նադատել թերութիւնները, չտա-
գովել առաւելութիւնները և ի
հարկին քաջալերել, հայ խմբա-
գիրները իրենց այս իրաւունքը ի
գործ դնելու համար երբ իրենց աչ-
քը գէպի վարժարան կը դարձնեն
քիչ բացառութեամբ միշտ անգո-
հացողիչ տեսարաններու հանդի-
սատես կըլլան և հետեւաբար քնն-
նադատութեանց տարափ մը կը
տեղացնեն նախ ուսուցիչներու գըլ-
խուն, յետոյ հոգաբարձուներուն
և մաս մըն ալ ծնողաց:

Արդէն սա ճշմարիտ է թէ մեր
մէջ ամենէ աւելի քննադատողը
կղերը և վարժապետն է: Բայց
մեր այս երկու կարեւոր դասա-
կարգերուն դէմ ամենաբուռն քնն-
նադատութիւն ընողին երբ հար-
ցնենք «այդ դասակարգերուն
ինչ տուեր ենք որ ինչ կը պաշ-
հանինք»: քննադատը պատաս-
խանելու կը դժուարանայ. որով-
հետեւ իսկպպէս բան մը չենք
տուեր մեր արդի տէրպապաններուն
և ոչինչ չենք տուած նաեւ մեր
վարժապետներուն: Ո՛ր էին մեր
կղերանոցները ուրկէ կարող և բա-
նիբունք քահանաներ դուրս գային
և այսօր չըստիպուէինք սափրիչը,
ածխավաճառը, ծխավաճառը ու
հացագործը քահանայացիներ: Այ-
սօր ո՛ր է մեր վարժապետանոցը.
ուր յաճախած և հոն պատրաստ-
ուած չըլլալու ոճիւրը գործած ըլ-
լան մեր վարժապետները: Երբ
մենք, հայերս, չենք հայթա-
յիած անոնց պատրաստուելու մի-
ջոցներ, ալ ինչ տուեր ենք որ
ինչ պահանջներ իրենցմէ:

Վերջին տարիներս կղերական

ներու տեսակէտով ուրախանալու
պատճառ ունինք, նկատելով թէ
մի քանի կղերանոցներ, մանա-
ւանդ Արմաշը, մեղ տարուէ տա-
րի կը հայթաթեն բաւական թը-
ւով ընծայացուներ, որոնք պիտի
գան հայ կղերին դիրքը հետզհե-
տէ բարձրացնել, որչափ որ դա-
րուս ոգին կը ներէ կղերին բարձ-
րանալ:

Իսկ գալով վարժապետներուն,
ինչ ըրած ունինք անոնց մինչեւ
այսօր: Ո՛ր են մեր վարժապետա-
նոցները. բոլոր հայ ազգին հա-
մար գոնէ մէկ հոտ կրնա՞նք ցոյց
տալ. ուստի ո՛ր պէտք էին պատ-
րաստուել մեր վարժապետները:

Երբ այսօր մեր գաւազները կու-
ղենք հայ վարժարաններու մէջ
աղգային դաստիարակութեամբ
կրթել, ստուար թիւով հայ վար-
ժապետներու պէտք կունենանք.
բայց երբ չունինք այդ կոչման
համար պատրաստուածներ, կըս-
տիպուինք «դիւ վարժապետ ը-
րէք» քողիւն ձեռքէն բռնել վար-
ժարանէն ներս խոթել, բաւական
է որ ասոնք քիչ մը կեղծաւորու-
թիւն, քիչ մը արտաքին ձեւեր և
քիչ մըն ալ լեզուի ճարտարութիւն
ունենան ու ամսականին ալ կար-
ճին երկուսին շատ չը նային:

Ահա այս ձեւով կըլլայ մեր
վարժապետներու ընտրութիւնը,
առանց անոնց բարոյականը և ան
ցեալ ու ներկայ կեանքին մակար-
դակը աչքէ անցնելու: Ապրուստի
այս նեղ ժամանակամիջոցներու
մէջ, երբ այսչափ դիւրին ձեռք
անցնելիք պաշտօն կայ, ալ հա-
սարակութեան ամեն դասակար-
գէն յիշ գաւազան մը ձեռքը առ-
նողը կը վազէ «ես ալ վարժապետ
եմ» ըսելով: Միթէ այս կերպով
ընտրուած չէ՞ մեր չուրջը գըտ-
նուող վարժապետներու մեծամաս-
նութիւնը, որուն մէջ կը տես-
նենք, վաճառատներէն արտաք-
ստուած ծառաներ, գրագիրներ, պո-
մարդիկներ և նոյն իսկ իրենց
անցեալովը արատաւոր տեսակ տե-
սակ բաղդալիներ, որոնք բա-
ցի վարժապետութենէ ամեն բա-
նի կը յարմարին: Ահա այսպիսի-
ներու կը յանձնենք մենք մեր
գաւազները, կուտանք միւր դը-

րամները, որպէսզի անոնք մեր
գաւազաց ուսման անդին ժամա-
նակը մեղցնեն. և երբ տարիներու
ընթացքին մէջ կըզգանք մեր յու-
սախաբութիւնը. «մե՛ղք մեր դը-
րամին, աւա՛ղ մեր ժամանակին»
ըսելով կը բաւականանանք, ա-
ռանց հիմնական դարմանը փընտ-
ուելու. ու կը թողունք որ մեր
գաւազներն ալ իրենց կարգին ի-
րենց գաւազաց համար նոյն ա-
ւազուով ընեն:

Մեր հարուստ եւ ազդեցիկ դա-
սակարգը փոխանակ հանրային
վերքին վրայ իր մասը դնելու,
միայն իր գաւազի փրկել կը նա-
յի, նիւթական զոհողութեամբ մը
զանի մասնաւոր կամ օտար վար-
ժարանի մը մէջ տեղաւորելով. եւ
ստէպ սա աւելի կը խաբուի քան
այն աղքատ ծնողները որոնք եր-
կան կարճ իրենց գաւազները ազգ-
վարժարանէ դուրս չեն հաներ,
ուր գոնէ օտարանալու եւ մասնա-
ւոր վարժարանաց մէջ եղածին
պէս շիւղացած ըլլալու դատապար-
տուած չին:

ՅԱՅՏԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Ժէօն-Թիւրքերու Պալատ կօմիտէին
կողմէ մեծ պետութեանց գեսպաննե-
րուն արուած գրութիւնը կուգանք
թարգմանաբար հրատարակել:

21 Յունիս 1900

Պարոն դեսպա՛ն,
Այն ապականուած և նորօրի-
նակ վիճակը ուր կը գտնուին
թուրքիոյ ժողովրդային կեանքն
ու վարչութիւնը վերջի մէկ քանի
ամիսներու մէջ նախընթաց չըր-
ջանէն ալ աւելի սրուած են կա-
մայականութեան և բռնապետու-
թեան պատճառաւ:

Վարչութիւնն անգամ, անվիճե-
լի իրողութիւններով, զարմացած
կը հաստատէ ժողովրդին մէջ կեն-
դանութեան ու կորովին վերածնի-
լը:

Բազմաթիւ անձնաւորութիւն
ներ, ամենքն ալ բարձրագոյն շր-
ջանակէ, նշանաւոր և ազդեցիկ
իւլէմաներ և պիտական խորհրդա-
կաններ իրենց օրէնսգէտի և հրա-
պարակագրի կրկնակ արժանիքովը
ծանօթ, վերջապէս տաղտկացած

ներկայ վարչութեան ներխիւ ուղ-
ղութիւնէն, վերածնութեան գործը
ստանձնեցին. մէկ քանիները ձեռ-
բակաւելով դատաստանի ենթա-
կուեցան, որոնք՝ առանց վարանե-
լու, նոյն իսկ վեհապետի պալա-
տին մէջ յայտնեցին ազատութեան
համար իրենց ունեցած գործն ու
պաշտօնը:

Թուրքիոյ յոյսն ու ապագան եւ
զոգ երիտասարդները այս լքուած
դատին առթիւ դիմումով մը առ-
նական քաջութիւն մը ցոյց կու-
տան. ուր յայտնի կերեւայ նկա-
րագրի անկախութիւնը որուն ամ-
բողջ արժէքը եղաւ բանտն կամ
աքսորանքները:

Վիրջապէս նոյն իսկ կայսերա-
կան ընտանիքի անդամներէն մին
Սուլթանի մէկ քեռայրը Եւրոպա
փախաւ. լսել տալու այն անպի-
տան եւ կեղիքիչ դրութեան նը-
կատմամբ իր բողոքները:

Ասիկա, որ պէտք էր վարչնե-
րուն աչքը բանար եւ մղեր զի-
րենք բարենորոգութեան ողջուա-
լի շուրթի մը մէջ, ուրիշ արդիւնք
չունեցաւ բայց իթէ ալ աւելի
զուգուեց զանոնք նորանոր ճնշու-
մեր, հալածանքներ, սարսափներ
երեւան եկան. անամօթ չա-
րագործ որ իր հին ոճիւրները կը
ծափէ նոր նախճիրներով. Սուլթա-
նի իշխանութիւնը կը բանտար
կէ կաքսորէ, կը խողխողէ ամեն
անոնք որ կը բողոքէն կը վիճեն
ու կը խօսին: Սակայն հանրային
խղճին զարթնումը անվիճելի է եւ
հակառակ ճնշումին որ կը կրկ-
նուի, ժողովուրդը կը յուզուի եւ
վերջապէս կը համարձակի բարձ-
րաձայն արտայայտել այն խորունկ
զգուանքը որ կզգայ կործանարար
աւերիչ, ամօթալի, կամայական
վարչութենէ մը:

Իրաց այս վիճակին շարունա-
կութիւնը կրնայ շատ ծանր հե-
տեւութիւններ առաջ բերել: Արդ-
ընդհանուր խաղաղութեան բաղ-
ձացող ըլլալով, կուգանք այս հան-
դիսաւոր դիմումը ընել մարդասի-
րական և հայրենասիրական զգա-
ցումով մը կապուած, ինչպէս հա-
յոց և Յունաց, նոյնպէս ալ Սումա-
նեան ազգութիւնը կազմող տար-
բեր տարրերու հետ:

«Ազատական Օսմանցի»ին կեդ-

րոնական կոմիտեն, վստահ թուրքիոյ բարեկամ և գաղտնից պետութեանց րարի տրամադրութեանցը կը խնդրէ անոնցմէ երկիրը վերականգնելու գործին աջակցել ի գործ գնելու համար այն ընդհանուր բարեկարգութիւնները, որոնց անհրաժեշտ պէտքեր իրենք մեծ պետութիւններն իսկ ճանչցած են մեր հայրենիքը արիւնով ներկող անցողիկ օրերէն իտոյ:

«Ազատական Օսմանցի»-ի կեդր. կոմիտէն պատիւ ունի խնդրել մեծ պետութեանց Պ. Պ. գեապաններէն որ բարեհաճին ուշադրութեան առնել ներկայ ազգաբարձրութիւնը և կը յայտնէ թէ բնութեւ չը պիտի վարանի իր նախնական ու բարձր նպատակը հետապնդելու անխտիր ամեն միջոցներով. յանուն հայրենիքի բարօրութեան:

ԿՕՄԻՏԷԻ ԿՆԻՔԸ

Կնիքին վրայ շրջանորէն և թուրքերէն հետեւեալ բառերը փոփոխուած են:

«Օսմանցի հեւրիւթէրմէրան Ֆարգասը ճէմիլթի մէրքէրիւսիս»:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԵՐԱԿԱՆԸ

Դրոշակի վերջին թիւին մէջ յայտարարութիւն մը կար, որով կը հրաւիրուէին Պալքանեան շրջանակի մէջ գտնուող բոլոր այն անձերը, որոնք ուղղակի խմբագրութիւնէն «Դրոշակ» թերթը կատարան, որ փութան շուտով պատասխանել Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան շրջանի առժամայ կեդր. կոմիտէին կողմէ հրատարակուած շրջաբերականին: (*)

(*) Մենք եւս մինչեւ ցարդ ուղղակի «Դրոշակ»-ի խմբագրութեան թերթ կը ստանանք, բայց անոր վերջին յայտարարութեան հակառակ Պալքանեան կոմիտէի կողմէ ու եւ չը քաջաբան չենք ստացած, նոյնպէս մեզ ծանօթ մէկ քանի անձեր ալ մինչեւ կ'իմանանք թէ այդ շրջաբերականէն մէջ մէկ օրինակ ստացած են ոմանք:

Ինչ է արդեօք այս խտրութեան պատճառը:

Կերեւի թէ ահէն գաղտնիկական ալ (փոփոխութիւն պէս) իրաւունք չունի կզեր այդ շրջաբերականին պարունակութիւնը հասկնալու. եւ ըստ այնմ իւր դիտողութիւնները ընելու, զի մինչեւ այսօր Պալքանեան երկիրներու մէջ տեղի ունեցած զեղծումներու խաչագողութիւններու մասին ծանօթութիւն ունեցողներէն դազմանի պահուեցաւ այդ շրջաբերականը և միայն տրուեցաւ ամեն անոնց, որոնք երբէք մազի մը չափ ծանօթութիւն չեն ունեցած հրապարակը յազող խնդիրներուն վրայ եւ կամ կոյր գործիքներ են:

Առժամայ կեդր. կոմիտէն պաշտօն ունի անշուշտ այդ շրջաբերականով անգիտակցութեամբ և անտեղեկութեամբ կարծիք անելու. ու զոնքս գաղտնիքներէն զոնքս և կամ յառաջիկային գումարանկիւք ընդհանուր ժողովին ներկայացնելով խորհրդի, իբր թէ Պալքանեան երկիրներու մէջ ու եւ թոն չէ պատահած և. այն ամեն հրապարակուածները գրաւոր տրիւններ և մատուցողներ են: (*)

Բայց 23 անուակի եւ Տիկնանց մասնախմբի խնդիրները իրենց սոցիալականութեամբ կը մնան ու երբէք կարելի չէ այդ խնդրոյն շրջանակին չի պատկանող եւ տեղեկութիւն չունեցող անձերու պատասխանելու ու դիտողութիւններէն զոնքս և հետեւութեան հանգիւ. հապա պէտք է սոցիալականութեան ունեցող անձերուն բացառութեամբ իրենք ալ անուակ օրոյնպէս լուսարարութեամբ և յայնցաւորը գտնելու համար:

ԴԱՇՆՈՒ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԸ

31 ՔՈՒՆԻՅԻ ԽԱՐԿԱՆԻՍԻՒԹԻՒՆԻՐ

Սօֆիայի թաղ. խորհրդոյ ընտ. րութեան տան զրպարտիչ թերթի թղթակցին իր մէկ երկու համախոհներով «31 քունից խորհրդ. խմբութիւն» պորժում լինելը հրապարակած էինք. խորհրդախմբութիւն մը որ իրօք գործուած և պաշտօնապէս հաստատուած է: Բայց ուրովհետեւ մենք անոր հեղինակներէն մին ալ զոյգ առած էինք. այսօր զուր ճիշդ կընէ ինքզինքը և պատելու համար և երեք անձերէ

ստորագրուած երկուող մը կը գրեն իր անպատկառ մէկ գրութեամբ տակ, գրութիւն մը, որ լիութիւն կը հաստատէ այն փաստական տիրույթը որ ամիսներ առաջ իր մրտ ճակտին փոկցուցած էինք զինքը փողոցային սրիկայ կոչելով. ուստի հաս ալ եւս այդ ուղղութիւնի պատասխանել չենք զիջանիւր, այլ կը բաւականանանք զանի որակով վարի երկտողը գետեղել: (*)

Մեր խօսքը ուղղելով ընտ. ժողովոյ նախագահին և դիտմանի՝ որոնք կը խօստովանին թէ քնտ. րութիւնը բեկանող լուրջ պատճառներ գոյութիւն ունեցած են, — զիստորը 31 քունի խնդիրն է անշուշտ — ինչ որ հանրագրութիւն մ'ալ կը վկայէր. զիրենք

(*)

Հայտնից թերթի Սօֆիայի թղթակցը երկու տողով ճանչցնեմ Ձեզ. իր պատասխանութիւնը այնչափ պզտիկ էր որ արակել համատեղութեան դէմ է. այս կը վկայէր Մարիճայ գետի փոփոխութեան մէկ սահմանն ալ կորոշուի պետական վարժարանի արտաքսուած ըլլալով, իբրեւ իր զարնկիւններուն պատուին թշնամի: Ինչ որ թղթակցութիւններ կը դրկէ հայտնից թերթին մի կարծէք թէ ինքն է գրողը. այդ ողորմելին երկու բառ իրարու քով զնել չի գիտեր և կրնամ ըսել թէ կարգացածն ալ չի հասկնար:

Ոյս խեղճուկը Սօֆիա պաշտօնատան մը մէջ օրինակող (գրեմաճը) մըն է, որովհետեւ ամառականով մի, որ իրեն գինետան—սրճարանի ծախքին չի բաւեր, բայց իր պիտոնէին պակասը գոցելու համար խեղճ գաւառացի միամիտներ կը չափազորէ յեղափոխութեան անուանով և սուտ հերոս ձեւանալով, զի անգամ մը տոնկապատին երթալու քաղաքործութիւնը ունեցած է, հոն յեղափոխականաց երկու գումար ջուր ստուած և քանի մը օր ալ Ոսկան Նաղարին ձին ջրած է: ...

կը հրաւիրենք, մասնաւորապէս Սթ. Նախագահ հայր, որ ցոյց տան բացօթյա ընտրութեան բեկան ման իսկական պատճառը և այդ 31 քունիցը մէկ պահարանի մէջ ներկայացնող խմբակը: Այսպէսով միայն կրնան փրկել — երբ փափաքին — անորակելի ծանօթ թղթակցը (եթէ նիւ փրկուելու տեղ ունի). ոչ թէ անորոյ գրութիւնով մը, զոր, ինչպէս կերելայ, ստորագրած են միմի. այն տաճկական սա առածին իմաստէն մղուած «ընտրութեան ընտրութեան ալ»: Եւ արդէն այդ պաշտը իր խօսքով կը բռնուի երբ կըսէ թէ «այդ 31 մշտնիւրը իմ կուսակցիցներս էին, որոնց մին զիւրեք իր հայրենակիցներու հետ տուած որոշումը, ճշուելով իրտի րովմէն:»

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՋԻ

Հոգաբարձութիւն հարկ կը համարի ծանուցանել ի նպատակ բաղաժան Սպ. երկուսեւ վարժարանայ 120 կոտր խումով և նուր ճաշակով պատրաստուած ձեռագործներ վիճակահանութեան դրամ է, վիճակահանութեան վէճ մի տուածի գին 1 ֆրանք արժու զուրկութեամբ:

Լիայոյս երբ որ արգոյ հայ հասարակութիւնը բաղժան աղքատ և որը մանուկներու կրթութեան գործը ապահովելու մեր այս ձեռնարկը պիտի հաճի քաջաբերի, փութալով զնել վիճակահանութեան ալ տուածներէն:

Ի դիմաց հոգաբարձութեան Այս. երկուսեւ վարժարանաց Կնիք

Վառնա

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂԵՐ

ՊԱՅԿԵՐ ՄԸ ՅԱՅՎԱԶԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Շատ գրաւիչ ու պերճ էր աս եկեղեցականի լուսնային, իր բոլոր խրատներու ու երգերուն մէջ ազգային անցեալ կեանքէն ու պատմութենէն համեմատելի կը գնէր: Մոլեաւանդ սիրող մէր յառաջդիմական ձգտումներուն ու ազգային գործերուն: Ինք լինելով բնիկ Մշեցի, բնական օրէնքով ժառանգած էր Մամիկոնէից սերնդական անձնագահութիւնն ու անվիճելի ժողովրդականութիւնը: Քանի տարի քր մնաց ան Բաղէշի առաջնորդ, Սալմաճորոյ ամբողջ ժողովուրդը սիրով ու համակրութեամբ իրենով հետեւեցաւ անոր: Ու երբ թիւրք անկարգ կատարութեան ստիպմամբ անիկա հեռացաւ իր ցանկալի հօտէն, բոլոր ժողովուրդը, առանց բացառութեան, լալով ծամբայ զրին զայն, ու իբրեւ առհաւատելայ իրենց անկեղծ սիրոյն, ուսմիկները հետեւեալ երգը յուղուած կերպէին:

Է՛ր հեռանաս մեր քաղաքէն ո՛վ հայր սուրբ, Կարօտ մնացինք օրհնեալ ձայնիդ ո՛վ հայր սուրբ Դուն գնացիր միզ լացուցիր ո՛վ հայր սուրբ Որը ու անտէր մեզ թողուցիր ով հայր սուրբ եւն: Առաջին դասը ինքը մեծաւորը աւանդեց ցմեղի ու գիւղի համայնքի ցանկալիութեամբ Ստուգէլէնց Տ. Յակոբը վարժապետ կարգուեցաւ մեր զարդին: Տէր Յակոբը՝ պարթեւ հասակով, վայելուչ դէմքով ու անուշ ձայնով գեղանմանայ տէրտէր մէր: Իր բոլոր գիտութիւնը նարեկէն ու շարականէն անդին չէր անցներ: Բայց զարդը նոր բացուած ու մենք ամենքս ալ Ա. Բ. Գ. նոր պիտի սովորէինք, ժամանակաւորապէս անոր գիտցածն ալ կ'օգտէր: Մեծաւոր հայր Սուրբի թելադրութեամբ

նա սկսեւ դ ստիպուել մեզի ա՛յն պատկերողարդ քերականներու վրայ, որոնք՝ առաջնորդն ինքն իր կողմէն նուէր բերած էր, ա՛յ գիւղական նորաբաց դպրոցին: Հոկտեմբեր ամսու սկիզբներէն էր երբ բացուեցաւ նոյն վարժարանը, մինչեւ մեծ ջատկին, մեղէն ուսման, սկսան եկեղեցիի մէջ փոխանել, չափիկ հագնել, բեմ ելնել: Սաղմոս, ժամաղիթք գործոց ձգեցինք, շարականէն կուրներ կիւղէինք: Ու երբ մայիս ամսուն մեծաւորը այցելեց մեզ, շա՛տ դո՛ւ մնաց ա՛յդ առաջդիմութիւններէն (՝.՝.՝) ու դարձեալ քաջալերութեան համար, մեզի մէկ մէկ առձեռն ազգային պատմութեան գաղափարներ իր քաջկէն նուիրելով, հայրաբար խրատեց ու յորդորեց աւելի աշխատասէր ըլլալ ու աւելի մեծ նուէրներ ստանալ:

Տէր Յակոբի վարժարանը, ո՛չ փայտալայ ունէր և ո՛չ ծեփ: Անիկա թիւեւ պարզ տիւրացութեանն ա՛յդին ոչինչ չէր գիտեր, սակայն, իր գուարթութեամբ իրենք ինքնուրոյն շնորհիւ, շա՛տ անուշ ու շատ մը տնտեսութեան կը վարուէր մեզի հետ: Գործուն, ամառ ու աշուն մինչեւ ցորեկուան ճաշը (կէսօրը) դպրոցի մէջ կաշխատէինք, ճաշէն ետք, մէկ ժամէն աւելի իրարու հետ կը գոտէմարտէինք, ու մեզմէ ով որ ջղուտ ու ժով յաղթող լինէր, տէր հօր հրապարակային գովութեան կարծախախտ: Ու յետո՛յ մեր գրքերը անութիւնս զարկած, կամ վերին դասի պա՛ղ պա՛ղ առուակի եկերքք, ծաղկած ու ուռած ծառերու շուրջը ներքեւ, կամ ներքին դասարան, տէրտէրի վարունգի ու ձմերուկի արտասանութեան մէջ, կարգալու ու երգելու կերթայինք: Տէրտէր մեր առկեւէն, ու մենք խմբով անոր և տեւեւ, մեր սովորած մէկ երգը երգելով, կը դիմէինք հոն, ուր որոշուած էր այն օրը երթալ, ու այսպէս, բնութեան այդ հիանալի պատկերի ազդեցութեան տակ, Տէր Յակոբը առանց մեզի ծանր կամ վերաւորական խօսք մը ընելու, առանց ֆի-

լիքական կսկծեցողիչ պատիժի, իր մտաւոր անհամահաւաստ պաշարը անձանքի կը փոխանէր մեզի, ու մենք, երբ ա՛յդ քաջալերութեան ու անուշ թիւեւ կը տեսնէինք մեր գեղջուկ ուսուցչի վարժարանի մէջ, զարդը, կարգալ, գրել ու ասոր նըման ջրաները մեր սոցալական միամիտ տղան հրաշագեղ դոյններով չէր մարմնաւոր, ու անհուն սէր մը կը տածէինք զէպի մեր տիպար վարժարանն ու վարժապետը:

Գ.

Երկու տարի բոլորեցաւ Տէր Յակոբի դպրոցի վրայ, ու իր առաջին կարգի սաները նարեկէն «Բարեբաւեալ» եւն. քոց գիտէինք: Տէր Հայր թիւեւ մանկավարժական օրէնքի գոյութեան ձեռքեկութիւն չուէր. բայց՝ ինչպէս կերեւանար, ազգիւղի սքանչելի օգն ու ջուրը, անոր խառնուածքին վրայ զօրաւոր կերպով ազդած լինելուն, անոր ազնիւ հոգիին մէջ առաջ բերած էին անսահման զուարթութիւն ու անհամեմատ անուշութիւն մը: Երբ Տէր հօր ցանկութեան համաձայն, մեզմէ մէկը յատակ կերպով իր դասը կարգար, կամ թէ գրուել մը նարեկ, կամ ծննդալի զրուածքէն հաստատ մը քոց արտասանէր, ինչան իր գոհունակութեան, խնձոր, չամիչ, ձմերուկ ու երբեմն ալ դրամական փառքիկ նուէրներ կընէր, ու ադ ինչանպէս պարզ տէրտէրի անուշ վարմունքը, իր հոգեբանական բոլոր ուժով, խթան դարձաւ մեզի հետեւ հորիզոնները սեւեւել մեր մտքի հայացալէսը:

ՂԱԶԱՐՈՍ Գ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

(Շարունակելի)

ՀԵՐՔԻՍԻՍ

ՊԵՏՏՈՒԿԱՆ ՍՍՏԱԽՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Շարժում լրագրին 239 թիւին մէջ «Պատմական հերթում» վերնագրին տակ գրութիւն մը կարգադրի հոգաբարձութեան ատենապետ Յ. Ս. Քանդարեան խորագրութեամբ, ի պատասխան ազգային վարժարաններու տնօրէն Շարիմանի մասին վերջերս «Իրաւունք»-ի մէջ երեւցած քանի մը դրութեանց։

Ընդգնակելով սակայն թէ՛ հոգաբարձութեան ատենապետ Տ. Յ. Ս. Քանդարեան բացարձակ կը ստախոսէ աղայի մասին փութկոտութեամբ պաշտօնագրէն հերքելու մարմնով մը այդ հրապարակութիւնները։ Իմ կողմանէս չը պիտի տամ իրեն պատասխան այլ միայն պիտի բաւականանամ երկու բժիշկներու տեղեկագիրներէն ու հաշտարար դատարանի դատաւարութեան 59 թիւ վճռագրէն պատասխանել իրեն։

Ա. կառավարական երկու բժիշկներէն առնուած տեղեկագիրը հաստատած է Աղաճեանի տղուն պատճառով գանա կոծուիլը, ըսելով թէ հետքերը հազիւ 10-12 օրէն կը բուժուին։

Անա այս մասին դատաւարութեան վճռագրին ալ քանի մը կէտերը։

«Յանցաւոր նկատուած է Վահան Շարիման, Տնօրէն-Դատարար քաղաքիս հայ վարժարաններու, թէ 19 մայիս 1900, վարժարանի բակին մէջ կրօնի ելած պահուէն ի կարգ բերելու համար զարկած է պատճառով թեթեւօրէն վիրաւորելով զայն։»

Բ. Ինչպէս կըսէ Տ. ատենապետը, Աղաճեանի տղուն ծանր յանցանքի մէջ գտնուած ըլլալուն համար պատժած է զայն տնօրէնը թեթեւ ապականով մը բայց երբէք գանակոծած չէ։...

Անա այս մասին ալ դատաւճռին պատասխանը։

«Պաշտօնաւոր դատարար կէտերի Անկէ-լոֆին, անչափահաս աշակերտուհի Վերոն Լորամ Միքայէլեանի, Յարութիւն Գաղաթեանի, Ալիքեան Տերեւեանի վկայութիւններով ու ուրիշ գանադան փաստերով, հաշտարար դատարանս կը հաստատէ թէ՛ Գաղաթեանի Աղաճեան գանակոծուած է Շարիմանէն իր անկարգ վարմունքին համար ոչ միայն ապականով այլ նաեւ զաւազանով (Պատժօնով) բայց որովհետեւ նոյն օրինակ պատիժներ եղեանական պարագաներու համար իսկ ներքին չեն, ուր կը մնայ վարժարանի աշակերտներուն համար, առ այս ակնյայտի կը հաստատուի դատարար Շարիմանին յանցապարտութիւնը»։

Գ. Կըսէ Տ. Ատենապետ թէ՛ տըղան հիւանդացած չէ, ու քանի մը օր առաջ նոյն աղան մարմնամարդի դանդաղ մասնակցած չէ առարկելով թէ վերջ ունի, զոր իր իսկ խոստովանութեամբ, ստացած է վարժարանէն զուրկ իր ծնողաց հետ Մարքովա գաղաթեան քաղաքին վրայ իյնալով, եւ զոր տղուն հաջորդած է Շարիմանին երեւակայական հարուածներուն վերադրել եւն եւն։...

Դատաւարութեան նոյն օրը Կարապետ Պիտեան Շարիմանին պաշտօնագիրը, ձեր ու 50ի մօտ ազգայիններու ներկայութեամբ նոյն վկայութիւնը ըրաւ արդարեւ, ու այդ ալ խիստ կարեւոր կէտ մը ըլլալուն համար դատարար շատ ծանրացաւ այդ կէտին վրայ մանրակրկիտ քննութեան ենթարկելով զայն, հարցունցաւ Կարապետ Պիտեանին թէ գանակոծեալ տղան որով ըսած էր Վեր Մարքովա վնասուելը—ընկերներուն, պատասխանեց Պիտեան, բայց գանակոծեալին ընկերներուն հարցունքով հասկցունցաւ այդ վկայութեան

կէտին շինծու ըլլալը եւ անկարեւոր նկատուեցաւ ու Շարիմանին ալ երեւակայական հարուածները «՛» իջեցուցին իր գլխուն քր. 106. 50ի եւ կամ ամսուան մը բանտարկութեան հարուածը։

Իսկ, «Երազարական անտեղի աղմուկներուն, սխալ ու անուարարականութիւններուն, քանակոծած չէ, պատճառով զարկած չէ, ահաւան կոտորած չէ, հիւանդացած չէ, վիրաւորուած չէ, ոչինչ պատահած է» ներու հակառակ այսօր ինկած էք դուք, ձեր պաշտպանեալով մէկտեղ։

59 թիւ դատաւճիւր Շարիմանին յանցապարտութիւնը կը հաստատէ բացարձակապէս ու ձեր ալ հոգաբարձութեան Տ. Ատենապետ... ստախոսութիւնը։

ԿԱՅԻՄ

ՄԵՐ ԹԵՐԹՈՆԸ

«Իրաւունք»-ի նախընթաց թիւով սկսանք հրատարակել Տաճկահայաստանի իրական կեանքէն հետաքրքրաշարժ պատկեր մը ՀԱՅ-ԲԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ խորագրով։ Այս երկասիրութիւնը ծանօթ գրող Տ. Ղազարոս Պ. Նահապետեանի գրչին արտագրութիւնն է եւ ըստ ամենայնի յանձնարարելի է մեր բնութեանը ուշադրութեան, ոչ միայն սահուն ոճին համար, այլ պատմուած վայրերը երկասիրողը անձամբ քար առ քար սերտած պարագաները ուսումնասիրած լինելուն համար։

Տ. Նահապետեան հայ գեղըական երգիչներնաբ, տխուր ու ոգեւորիչ պատմութեանը կը շղթայէ Հայաստանի վերջին քառորդ դարու անցուդարձը, հայ կղերին, վարժապետին, վանականին, ժողովականներուն լաւ ու յոռի կողմերը, հայ վաշխառուին, չորպաճիին կեղծքուսները, թուրքին ու քրիստոնէ հարստահարութիւնները, վերջապէս յեղափոխական գաղափարին ծագումը ու ըսկզբնաւորութիւնը։ այս ամենը տեղագրական ու պատմական որոշ ծանօթութիւններով։

ՀԱՅԲԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐԸ պիտի հրատարակենք նաեւ գրքի ձեւով։ Այժմէն բաժանորդագրուելու ուղղով մէկ ֆրանք շրջելու է մեզ։ Տպագրութիւնը լմննալէ վերջ գիրքը պիտի ծախուի երկու ֆրանքի։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

«Օռօսի» Յուլիս 18 թիւէն հետեւեալը կը քաղենք։

«Երեկ» մեր գրասենեակը այցելեց թիւրք սպայ մը ոստիկաններու հարկաւոր պետ Յէնսի թուրք յեղափոխականի մը հետ։

Հարեւրապետը 1896ին Հայաստանը արեւելեայ ընդ գարհուրելի ջարդին թէ ակնատես եւ թէ գործողներէն մին է։ Յիշեալը այդ նոյն խոսքով թիւներէն յետոյ, որ իր գլխաւորները գործադրել սուած են, կասկածելի երեւեալով գինորութիւնը ձգելով

նարբութէն փախած է, փնտռելու վայր մը ուր կարող ըլլայ անվախ եւ անվտանգ յայտնել իր զրոյցները։

Քիչ օրէն պիտի սկսինք հրատարակել հարեւրապետ Յէնսի յուզիչ յայտնութիւնները։

—Լօնտօնի ոստիկանութիւնը 25 աթերիին տուգանքի դատաւարտեց բաղադրուշակ հուշակաւոր կին մը։ տիկին Զուլէյքա ֆա վալիէն որ տարին 1500 անգլիական ոսկի կը վաստկի եզեր իր արհեստին շնորհիւ։

—Կալէսի իշխանին երկրորդ դուստրը, Վիքթորիա իշխանուհին որուն համար կըսուէր թէ իր մօրեղբօր որդւոյն կրէաէի Եօրկիոս իշխանին հետ նշանուած էր, վերջերս յայտարարեց է որ բնաւ չուզեր ամուսնանալ։ Յայտնի չէ իշխանուհի օրորագին այս յանկարծական որոշման պատճառը։ Սակայն ոմանք կըսեն թէ մեծ մօր մէն զատուել չուզեր, եւ ուրիշներ ալ իշխանուհին շատ անկախ բնաւորութեան տէր ըլլալուն ամուսնութեան գաղափարը իրեն անհաճօյ գալը կը յայտնեն։

Վիքթորիա իշխանուհին էն սիրած զօսանքներէն մին սուսեւրամարտութիւնն է եզեր։

—Պօէր վարձկան զօրքերը Դերի-կէր նախագահին դէմ շատ բարկացեր են, որ թրանսպալի բոլոր ոսկիները իր քովը պահած ըլլալով, բաւական ժամանակէ բան մը չէ վճարեր անոնց։

—Զինաստանի քրիստոնէից ջարդին Մահմետական Զիններն ալ մասնակցած ըլլալով, Պոլսոյ մահմետականները վերին աստիճանի ուրախացած են ըսելով թէ մենք հոս ինչ որ չկրցանք Եւրոպայի քրիստոնէից ընել, մեր մարգարէին շնորհիւ Զինաստանի մէջ տեղի ունեցաւ։

ԼՐԱՔԱՂ

Վանէն Պատրիարքարան գրուած է թէ տեղւոյն այցելու հովիւ Տ. Ներսէս Եպիսկոպոս Պօլիս դառնալու համար կը պատրաստուի։

—Զէյթունի մէջ մանկանց հիւանդութիւնները այնքան յաճախողէպ են եղեր որ թէեւ հոն հայ կիներ մինչեւ քսան զաւակ կունենան բայց անոնցմէ հազիւ թէ մէկ երկուքը ողջ կը մնան։ Նոյն պէս տարափոխիկ եւ համաճարակ հիւանդութիւններ ալ պակաս չեն ըլլար հոն։ Զէյթունցիները քանի անգամներ խնդրած են բժիշկներէ որ գան իրենց քաղաքը հաստատուին բայց լսելի չէ եղած։ Այս անգամ ուզողիկ Պատրիարքարանի դիմումը ընելով խնդրած են որ Զէյթունցի պատանի մը Պէրուլի կամ Պոլսոյ բժշկական վարժարանը դրուի։ Եւ պայմանաւոր արուեստը սորվելէն վերջը իր ծննդավայրին մէջ հաստատուի։

—Յովսէփ Եպիս. Ալվազեանի

Եպիսկոպոսի առաջնորդութիւնը հաստատող Պէրաթը առնուելու համար Պատրիարքարանէն քոգրի մը զրկուած է Ալիիէի պաշտօնատունը։

—Տփղիսէն Բիւզանդիոնի գըրուած նամակէ մը իմացուած է որ կովկասի ալ եւ ալ քաղաքներէն 15-20 հայ դաստիարակուհիներ Բարիզ պիտի երթան Արուսետահանդէսն ու մասնաւորաբար Մանկավարժական-Կրթական հաստատութիւնները այցելելու համար։ Այս վարժուհիները մանկավարժական ուսումնասիրութեանց համար քիչ մը ատեն Բարիզ մնալէ յետոյ Եւրոպայի կարեւոր մայրաքաղաքներն ալ այցելելով պիտի գառնան իրենց տեղերը ու շարունակեն պաշտօնին։

—Պուքրէշէ գրուած թղթակցութենէ մը հետեւեալները կը քաղենք։

Մանուկ Ղեւոնդեան անուն անձ մը Պուքրէշի մէջ հրատարակութիւն մը ընելով պարզած է հայ եկեղեցւոյ թաղականներուն կողմէ երկար տարիներէ ի վեր գործուած զեղծումներն ու ապօրինաորութիւնները եւ խստիւ ընդադատած է քաղաքապետութիւնը որ շատ ներողամիտ գտնուած է հանդէպ հայ թաղականներուն։ Այս գրութիւնը մեծ յուզում եւ իրարանցում յառաջ բերած է։

—Նոյնպէս կիմացուի թէ Պուքրէշի հայ քահանայներն մին ալ սկսած է պառաւ գնչուներու նըման թուղթերով ֆալ նախի եւ ալ եւ ալ միջոցներով ապագայի գուշակութիւններ ընել, ու այսպէսով իշխալ հայ քահանայներն եկամուտի լաւ միջոց մը գըտած է։

—Բնիկ Պուքրէշցի Գաբրիէլ Յակոբեան անուն 60 ամիայ հայ մը, իր ունեցած անուժելի մէկ հիւանդութենէն փրկուելու համար հանրային պարտէզի մը մէջ ատրճանակով անձնուպան եղած է։ Յիշեալը 100 տարեկան մայր մը կը թողու։

—Տեղւոյ Որբախնամի եռամսհայ հաշուեցուցակը ստացած ենք եւ պիտի հրատարակենք մեր յառաջիկայ թիւով։

ԱԶԴ

Անցեալ կիրակի ըստ ազգարարութեան ընկերութեանս վարչութեան կարելի չեղաւ ընդհանուր ժողով գումարել բաժանորդաց բացակայութեամբը։ առ այս կը յայտարարենք որ յառաջիկայ կիրակի (16 յուլիս) ազգ. վարժարանի մէջ գումարուած անդամները բանի որ հասնին մեծամասնութիւն համարուելով ընդհ. ժողով պիտի գումարուի։

Ընթ. Ընկերութիւն վառնա

